Ամբարտավան լեզուն կտրեմ, զանգը անեմ յերկու  
կես,  
Ծուլսր նրա յերկինք հանեմ իմ դեյլանի ծխի պես...

— Իմաստուն ե իշխանը մեծ, — խոնց բեկը  
Խորամանկ,  
Առ քաջ այնքան, վոր տաս քաջի գլուխ կառնի նա  
մենակ.

Բայց թե ինչո՞ւ հարկադրված լինենք դիմել ուժի  
խիստ,  
Յերք վոր նրան ձեռք բերելու ուրիշ միջոց կա  
հաճգիստ:

Սրդյով դուր չե՞մ երամայի ֆերմանն այնպիս  
գրելու,  
Վոր բավ լինի մի սուրհանդակ նրան այստեղ  
բերելու.

Գրել անո՞ւշ բունու մեղրով, փոխարեն սկ մելանի,  
Քաղցըր լեզուն, ասած ե թե՝ ոճը բնից կը հանի...

Ժպտա՛ց խարդախ Միր-Մահմուդը... ու յեղեգնը  
բրդրված՝  
Ենք գրագրի ձեռքում՝ ներմակ բղբի վրա նոնա՛ց:

11

Վերջալույսն եր փովել հեռու հորիզոնում վոսկեզոծ,  
Յերք սուրհանդակ ձիավորք նամբա ընկավ գիրք ծոց:

Նրա հետքով գիշերն իշակ ձգիրե մեծ քաղաքին  
Գիշերը՝ սկ, զարհութելի, ինչպես գրբաց կախարդ  
կին.

Ամիրապետ Միր-Մահմուդի ամարտում յերկու  
սարդ

Գլուխ-գլխի՝ գործում են մի սարսափելի վորոգայր.

Ընկած ե բավ գորգի վրա նարգիլեյի փողը—ոճ,  
Ու հսկում ե դավը նրանց յերկարապատ դուռը գոց:

Ու բոլորի հայաց գները դարձած իսկույթի դեպ ժաղավ,  
Հոծ քազմության ծովով անցավ ուրախության մի  
կոհակ...

## ԶՈՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1

Հազարավոր քոչունների գեղգեղամբով յերգեցիկ  
Ծածանվում եր ամառնային մի առավոտ գեղեցիկ:

Հովն եր փշում հովիտներից ու սարերից բուրավետ  
Ու համբուրվում շեկ արտերի ալեծածան ծովի հետ:

Գեղածիծաղ Մալաքյավում դաշտահանդես կա այդոր,  
Շուապում են դաշտը դեպի յերկսեռ խմբեր նորանոր:

Վրճում են լիախրխինց հժույյգները կենսառույց,  
Հոտոսելով ամառնային առավոտը լիառունգ,

Հպարտ, ասես, վոր կրում են իրենց վրա՝ թիկնավետ  
Կտրիթներին, վորոնք մրցման պիտի յելնեն իրար հետ:

Քաղաքից դուրս, դեպի դաշտը, ահա մի խումբ  
այրում  
Մլամում են քամուն տված քաշերն իրենց առյուծի:

Իսկ յերբ հասավ անմիջապես այդ սրարշավ  
այրումին,  
«Կեցցե՛ իգիր Մոկաց-Միրզեն» բոլորը մեկ՝  
ճայնեցին:

Յեվ հայ ու քուրդ աշխատավոր հոծ քազմությունը  
այդ մեծ՝  
Ամառնային ավանդական դաշտահանդեսն սկըսեց:

Ցեղայրական առատ սիրով լի յեր մեծ սիրով նրա,  
Արտուրի՛ պես, վոր չեր տեսնում չար քազեյին իր  
վրա...

2

Շղբա կապած շողշողուն շուրջպարերը շարումակ  
Դառնում են զերք վետվետուն ծիածաններ  
յերփներանգ,

Դառնալով մերք հոդմածուփ ալիքների խոլ պտույտ  
Ու մերք նկուն հեղապար յեղեգների ծփանուտ:

Խշխշում են ծեֆծեֆուն նախշուն շորերը՝ քերև  
Պարսղների յերկու սեռ բռնած ուրախ քերին:

Հովին տված քաղկինակն ու քոլոզի քուխ փոշին  
Քաշում ե պարք ահա գեղահասակ պարքաշին.

Ու շինական մարդու մեծ շութչը ամեն մի քառում՝  
Նրանց առույգ, փոխնկալով յերգն ե զնգում  
շուրջպարում:

— «Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ,  
Գյոլի կռունկ երկեն վիզ.

Ախպե՛ր, ախպե՛ր, կարգա զիս,  
Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ.

Թյուշար մարդու մի՛ տար զիս,  
Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ.

Վոսի համբի՛ մոռնա զիս,  
Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ.

Զուլհակ մարդու դու տուր զիս,  
Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ.

Մքուժ զցի, պաշե զիս,  
Հա՛մ գյուլ, հա՛մ վարդ, հա՛մ նարգիզ...

Եերգն ե զնգում կարկաչակոս աղբյուրի ջինջ զրի  
պես,  
Ու դառնում ե ծեֆծեֆվելով մեղմածիկի պարը հեզ,  
Եերը նոր յերգի ծայր ե տալիս մի քուրդ տղա  
մրահոն,  
Ու լայնածիր այդ շուրջպարում բռնկում ե  
«Դերիկոն»:

— «Մեր տան առաջ արտ գարբնցան,  
Դերիկոն հո՛պնարոն, Դերիկոն ջան.

Յերկու ջեյրան միջով անցան,  
Դերիկոն հո՛պնարոն, Դերիկոն ջան.

Մեկն իմ յարն եր, մեկն ել քո յար,  
Դերիկոն հո՛պնարոն, Դերիկոն ջան.

Մամերը ծով, բաժը չինար,  
Դերիկոն հո՛պնարոն, Դերիկոն ջան.

Դերիկոնն դռան ավել կանի,

Իմձի քագուն աչքով կանի,  
Դերիկոն հո՛պնարոն, Դերիկոն ջան,  
Դերիկոն հո՛պնարոն, Դերիկոն ջան:

Դերիկոնն գուրքան հաց կը տանի,  
Դերիկոն հո՛պնարոն, Դերիկոն ջան,

Սերը քողած քա՛ն կը տանի,  
Դերիկոն հո՛պնարոն, Դերիկոն ջան,

Սերն ու կարագ զալում բեկին,  
Դերիկոն հո՛պնարոն, Դերիկոն ջան,

Աստված առնի նրա հոգին,  
Դերիկոն հո՛պնարոն, Դերիկոն ջան...

Թար են գալիս խառըն քոնած տղա, աղջիկ միասին,  
Ու զնզո՞ւմ ե հաջորդելով մեկ պարերգը մյուսին.

Ամեն մեկը սրտում ունի մի-մի անգիր տաղարան,  
Զայթակցում են նրանց յերգին ուրախ գուտնա-  
նադարան :

Միմչյեռ անդին, հեծյալները, գծած մի լայն  
ասպարեզ .  
Կատարում են մտած մրցման՝ ձիարշավի գոռ  
հանդես :

Երլինչում են գեղագարդար նժույգները կատաղի,  
Իրենց քամբին առած քիկնեղ յերիտասարդ,  
պատամի :

Հողն են դոփում մեծամբակ նրանք հազիվ  
սանձահար,  
Սպասելով խիստ անհամբեր՝ կետ-նշանին ազդարար :

Ու քոչո՞ւմ են արագլեթաց բոլորը մեկ՝ միասին,  
Հրաքորբուն լափող տենչով անցնելու մեկ-մյուսին :

Արկի տակ լուսաշողող նրանց արշավը իրկեզ՝  
Նմանում ե հանկարծ պոկված ասուպների լուսագես :

Մինչ բազմությունն ականատես այդ հիասքանչ  
հանդեսում :

Քար ե կտրել շատնչը պահած, դարձած համակ  
սպառում :

Սլանում ե նրանց հետքով ամեն-մեկը առանձին,  
Հեծած անսանձ ու սրարշավ իր աչքերի արար ձին .

Վորպեսզի յերք դառնա կտրին առաջինը հաղթական՝  
Իր զերմագին հիացմունքի ծաղկեփունչը տա նրան :

... Ո՞վ ե հերոսն այն հօյակապ՝ հետ ե դանում  
սրբնիք,  
Զերք հայելուն՝ ակնախտիղ մի նառագայր  
անդրադարձ .

Թողած հետև արշավասույր մրցակիցները ամեն՝  
Մոկաց-Միրզեն հառավ ահա հեծած իր Բյոզ-  
Բադավեճ .

Առավ դափնին հաղթանակի — հիացմունքի անթիվ  
վարդ,  
Ու խրխնջա՞ց լիալեցուն՝ ձին հեծյալովն իր՝  
հպարտ :

Մինչ արեգակն որը կիսած քեժվում եր դեպ  
մայրամուտ,  
Ու հրճվում եր աշխատավոր բազմությունը հայ ու  
քուրդ,

Քաղաքի մեծ նամապարհով, դեպի դաշտը սրբնքաց  
Նետի նման արագ քոչող մի ձիավոր յերևաց,

Վորը ահա եասալ իսկույն—ինչպես հանկարծ իշոտ  
ցին,  
Ու զարմացած բազմության մեջ աշտանակեց իր սև  
ձին:

Մի քիկնավետ յերիտասարդ, վոտքից-գլուխ  
զինավառ,  
Վորն իր մոայլ հոնքերի տակ ուներ գաղտնիք մի  
խավար:

Մի կախարդիչ գավազանով պարերն իսկույն կանգ  
առան,  
Զայները վողջ դադարեցին, լոեց զուտնա-նադարան...

— Ճգիրեյից եմ գալիս յես, Միր-Մահմուդի յեմ  
ծառան,  
Մոկաց-Միրզի՛ն տեսնել կուզեմ, նամակ ունեմ յես  
նրան,—

Սանձահարած իր նժույգ ձին ասաց հեծյալն  
անձանոք  
Ժողովրդին, վոր կարծես քե ունկնդրում եր մի  
չար բռ:

Մի սլատամի նշանացույց արակ նրա ուզածին  
Ու սուրհանդակն շտապ դեպի քաջը քշեց իրա ձին:

Յերբ անդ հասավ, ամմիջապես իր նժույգից քուալ  
ցած,  
Խոնարհարար գլուխ տվեց մինչև մեջքը կոացած.

Ապա հայտնեց ով լինելը և իր ծոցից հանելով,  
Մոկաց-Միրզին հանձնեց կնքված մի փակ ծրար իր  
ձեռով:

Մոկաց-Միրզին ծրարն առավ ու բանալով այն  
իսկույն՝  
Կարդաց անձայն, վոր գրված եր քաղցր մեղրով  
մեջը քույն:

Թուխ հոնքերը կեռ ու կամար իրարու մերձ՝ քրի  
պես  
Ակոսեցին խորշումներով նրա ճակատն արևկեզ:

Հոգին նրա խաղաղ ինչպես ծիծաղածուփ Վանա  
ծով՝  
Փոքորկահույզ լցվեց խավար և անմեկին  
կասկածով...

Ամիրապետ Միր-Մահմուդից յեկել եր մի հրաման,  
Շուտ Ճգիրե պիտի յերբար Մոկաց-Միրզին  
անպայման:

Տեսակ տիմուր՝ են կտրինի դռան առաջ կամքթած  
հոծ  
Մի բազմություն խոռվահույց ծովի նման ալեկոծ։

Յուրաքանչյուր սրտի վրա մի կաս-կարմիր վշտի  
կայծ՝  
Սողոսկում եր նրանց հոգում չարագուշակ մի  
կասկած։

Մեկնումի յեր սպասում մուր են սուրհանդակը  
բանքեր,  
Նառած իր սև ձիու վրա, վոր դոփում եր  
անհամբեր...

«Միթչ լուսինն արեգակին զիջի յերկինքն  
անսահման՝  
Պիտի սարայ մտնեն նրանք արևի ենտ  
անպայման»...

Կրնիք մտակ Մոկաց-Միրգեն, սիրուր սիրով  
մշտավառ,  
Վոր երաժեշտ տա սիրասուն իր սիրունին վշտահար։

Տեսակ նրան գլուխ դրած բարձի վրա սպիտակ՝  
Լա՛ց ե լինում դեմքը ծածկած ծամերի սև ամպի  
տակ.  
Նայե՛ց մի պահ վորսկանը լուռ՝ են վիրավոր  
յեղնիկին,  
Կսկիծի սև ամպը յելակ, ծածկեց պայծառ իր հոգին։

Կրակն լնեկած արտուտի պես սիրուր անզոր քպրտա՛ց,  
Գերանն ասես նարնատելով կոտրվում եր, կախվում  
ցա՛ծ...

Պլայլացող նրագն աղոտ սյունի վրա ծխակեր՝  
Դառնում եր մի կարմիր հրդեհ ու յերդիկից ձգուում  
վե՛ր...

Նայե՛ց, նայե՛ց խելակորույս, վշտամումով յեղնիկին,  
Ապա վասվող կրակի պես սեղմեց նրան իր կրծքին։  
Կրծքին սեղմած—հանց յերկիրը իր արևին  
հուրիրան։  
Համբուրում եր հազար ամզամ, ժնիվուշ ասում եր  
նրան։

— Մի՛ լաց լինի, իմ Ալ-Խաքուն, մի՛ մորմոքի  
աղեկեզ,  
Սիրուրս վշտիդ սուր դանակով դու մի՛ անի յերկու  
կես։

Մի՛ կտրտի սիրուրդ իզուր, ի՛մ սիրելիս, մի՛ սգար,  
Թող վոր գնամ, աչքերը բաց չեմ քողմելու յես  
յերկար։

Կերքամ այսոր, բայց վերըստին հետ կը դառնամ  
յես շուտով,  
Ու կը սեղմեմ քեզ իմ սրտին ավելի վա՛ռ կարսուվ։  
Բաժանումը՝ անդավանան յերկու սիրով սրտերի,

Տեսակ ավտուր՝ են կտրինի դռան առաջ կանգնած  
հոծ  
Մի բազմություն խոռվահույզ ծովի նման ալեկոն։

Յուրաքանչյուր սրտի վրա մի կաս-կարմիր վշտի  
կայծ  
Սողոսկում եր նրանց հոգում չարագուշակ մի  
կասկած։

Մեկնումի յեր սպասում մուր են սուրհանդակը  
բանքեր,  
Նստած իր սև ճիռու վրա, վոր դոփում եր  
անհամբեր...

«Միթչև լուսինն արեգակին զիջի յերկինքն  
անսահման՝  
Պիտի սարայ մտնեն նրանք արևի հետ  
անպայման»...

Կրնիք մտակ Մոկաց-Միրզեն, սիրտը սիրով  
մշտավառ,  
Վոր երաժեշտ տա սիրասուն իր սիրունին վշտահար։

Տեսակ նրան գլուխ դրած բարձի վրա սախուակ՝  
Լա՛ց ե լինում գեմքը ծածկած ծամերի սև ամպի  
տակ.  
Նայե՛ց մի պահ վորսկանը լուռ՝ են վիրավոր  
յեղնիկին,  
Կոկիծի սև ամպը յելակ, ծածկեց պայծառ իր հոգին։

Կրակն լնեկած արտուտի պես սիրով անզոր քպրտա՛ց,  
Գերանն ասես նարնատելով կոտրվում եր, կախվում  
ցա՛ծ...

Պլազմացող նրազն աղոստ սյունի վրա ծխակեր՝  
Դառնում եր մի կարմիր հրդի ու յերդիկից ձգտում  
վե՛ր...

Նայե՛ց, նայե՛ց խելակորույս, վշտամորմոք յեղնիկին,  
Ապա վասվող կրակի պես սեղմեց նրան իր կրծքին։

Կրծքին սեղմած—հանց յերկիրը իր արևին  
հուրիրան՝  
Համբուրում եր հազար անգամ, քնքուշ տառւմ եր  
նրան։

— Մի՛ լաց լինի, իմ Ալ-Խաքուն, մի՛ մորմոքի  
աղեկեզ,  
Սիրտըս վշտիդ սուր դանակով դու մի՛ անի յերկու  
կես։

Մի՛ կտրտի սիրտըդ իզուր, ի՛մ սիրելիս, մի՛ սգար,  
Թող վոր զնամ, աշքերըդ քաց չեմ քողմելու յես  
յերկար։

Կերթամ այսոր, բայց վերըստին հետ կը դանամ  
յես շուտով,  
Ու կը սեղմեմ քեզ իմ սրտին ավելի վա՛ռ կարտով։

Բաժանումը՝ անդավանան յերկու սիրով սրտերի,

Վորքան դժվար՝ հանդիպումը կրկին քաղցր ե  
ավելի...

Բայց Ալ-Խաքունն ասես նրան քուրուվին չեր  
լսում,

Ու աչքերիցն իր սկզբակ առատ արցունիք եր հռուն:

Փաքաք-վել եր քաջի վզով, աղերսում եր՝ մի՛ գնա,  
Միրտք կոտոր, աչքը լալով քարին մի՛ տա, մի՛  
գնա:

Քո խորոտիկ Ալ-Խաքունի քարք-իշները մի՛ քրջի,  
Քլուլն յերբեք իր սիրասուն վարդից հեռու չի  
քոչի:

Խեղճ յեղնիկ եմ քո շվաքում, ծերունի հոր  
միթունար,  
Կա՛ց, մի՛ գնա, մի՛ հավատա, աշխարիլ նենգ,  
մարդր չա՛ր...

Դուրսն այդ պահին սուրհանդակի ձին վրնջաց  
յերկու հեղ,  
Բաժանումի ժամն եր ասես ազդարում խելահեղ:

Ու վշտահար են վորսկանը լացող յեղնիկն իր գրկին՝  
Դուրգուրում եր նրան անվերջ, խնդրում կրկի՞ն ու  
կրկի՞ն.

— Թո՛ղ, Ալ-Խաքուն, քող վոր գնամ ու դու  
դարձիս սպասիր,  
Հետ կը դառնամ յես անվտանգ ու անութըս անքասիր.

Չե՛մ ուզում, վոր վախկոտ ասեն, Միք-Մահմուդից  
վախնցալ,

Քաջի համար դրանից մեծ չկա՛ ամոք, չկա՛ ցավ:  
Խոկ քեզ մինչև իմ վերադարձ՝ անպաշտան չեմ  
քողնի յես,  
Քաջեր ունեմ, քեզ կը հսկեն իրենց աչքի լույսի  
պես...

Դուրսը դարձյալ սուրհանդակի ձին անհամբեր  
լորխնչա՛ց...

— Դե՛, Ալ-Խաքուն, մնաս քարով, տխուր կտրինն  
այն ասաց.

Ասաց ու հուր հրաժեշտի համբույր տարով սիրածին  
Դուրս սլացավ կայծակի պես, հեծալ քամբած իրա  
ձին:

Յեկան քաջի տրտում քույրեր—յերկու քոչուն  
սպիտակ—  
Ու յերկու կուժ ջուր ցանեցին նրա շուբին լուսնի  
տակ:

Ու հավաքված բազմությունը սրտակոտոր ու վրդով.  
Ճամբա դրեց իր անվեհեր քաջին տխուր վողջերով:

Իշակ խավա՛ր, խոժոռ գիշեր—ճակատագրի պես  
մքին,  
Ուր հյուսվում եր մի հանելուկ անուծեիր ու խրթին:

ՀԻՆԳԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ

1

Արևի յելակ ալուլ-մալուլ մշուշ կապած են սարեն,  
Ցերկու հեծյալ նամբորդները մտան ահա ձգիրեն:

Շեքոկել ե արեամոռոք վազրի նման կատաղի  
Իր բազմաքիվ զոհերի մեջ սարայը Միք-Մահմուդի.

Ու նրան մոտ անմիջապես, արյունը ուշուշու մասընկեր՝  
Մինարեյի հաստաբազուկ աշտարակը յերկնաքեր,

Նութիյի յեկած կորաքամակ խաժամուժում խուղերի՝  
Վե՛ր բարձրացած սպառնական բռունցքի պես  
Վիքիարի:

Դուրս ե քափվել քաղաքը վոյշ, լցված փողոց ու  
տաճիք,  
Տեսնի Մոկաց մեծահամբավ տղամարդուն գեղեցիկ:

Փողոցներից՝ հետաքրքիր բազմությունով տոգորուն՝  
Անցնում ե նա, ճիռ վրա, ինչպես կանաչ մի  
գարուն.

2  
Ժպիտների քանի՛ փունչ,  
Լալ, մարգարիտ, նազ անգին  
Շաղ տվեցին նրա շուրջ  
Կանայք սիրուն ու զանգին:

Քանի՛ աղջիկ ամոք-խած  
Սիրալարոտ ու ծարավ  
Թրք-ընացին զարնըլված  
Հանց լոր, արոս ու կախավ.

Բայց վորսկանն են ճիավոր  
Անտես քողեց ու գնաց,  
Սրտի վրա վիրավոր  
Թառուծ լոկ մի հա՛վի մնաց,—

Ալ-Խաքունը իր սկաչ,  
Մի ըսպիտակ աղավնի,  
Սիրտը քնիուշ—վոսկի փարչ,  
Սերը—նոան հուր գինի...

3

Միք-Մահմուդի կանանցի վարագույրները հանկարծ  
Բացվում են լուռ՝ մոայլ ու մուք ամպերի պես  
նեղքըլված:

Յեկ ամեն մի նեղքից սիա նայում է հուր մի արև,

Սամդուխներից կտրիմն այն սեգ յերք բարձրանում է  
վերև :

Սուր-սուր նետեր կեռ հոնքերի աղեղներիցը քռած՝  
Հրդեհում են սիրակարու նազութ սրտերը կանանց :

Մորմոքում են կարոտավառ, տալիս հազա՞ր յերանի  
Են սիրունին բախտավորիկ՝ նրա սիրուն արժանի...

«Մեծահարուստ իր գանձերով և ակնունքով  
բովանդակ,

Ամիրապես Միք-Մահմուդը մի հրեշ է այլանդակ.

Նա մի տգեղ և անկրակ մոլորակ է լուսագործկ,  
Մոկաց-Միրզեն նահանչագեղ մի արեգակ է  
անզույգ»...

Ու յերազուն՝ ամեն մեկը սիրո դոներն է քակում,  
Թեկ կտրած քռչունի պես գերի ընկած  
վաճակում...

Ցերք շաշում է մտրակի պես հրամանը ներքինու.  
— Փարդաները շուտ քաշեցե՛ք, փանջարեֆիցը  
**հեռու...**

4

Մինչ նայում եր հարեմը վող, վարագույրները  
մեկդի՝

Մտավ հպարտ Մոկաց-Միրզեն ապարանիք  
Մահմուդի:

Տեսավ այնտեղ են սև սովոր Կոլոտ-Խոջին  
անամոք,  
Գալար յեկած ամիրապետ Միք-Մահմուդի քախտի  
մոտ:

Նրա զլխում անմիջապես փայլատակեց մի կայծակ  
Ու նու տեսավ լույսով նրա սորոր դավը բացարձակ.

Ու շնչտակի մի սուր հայացք նիզակելով բեկի դիմ՝  
Պատշաճ կարգով նա վողզունեց ամիրապետ  
Մահմուդին:

Միք-Մահմուդը բարկն առավ ու սիրալիր ակնարկով  
Հրավիրեց նրան նստել գորգի վրա, իրա քով :

Հոգին խավար ու սև գիշեր, աչքերում խանդ մի  
լոռին՝

Միք-Մահմուդը դարձավ շենք ու հոյակապ իր  
հյուրին.

— Միքա՞ւ, — ասաց, — իմացել եմ, վոր արժանի  
գովեստի.  
Վորովիան ես բազ և իմ յերկրում համբավ ունես  
իգիրի:

Ամիրապետ Միք-Մահմուդին մեծ պատիվ է ու  
պարծանեք.  
Վոր քեզ նման իգիր ունի իր աշխարհում հպատակ:

Քաջի հարզը քաջը գիտե, ու կանչել եմ քեզ ահա՛,  
Վոր անվանի քաջին վայել պատվներ տամ և ընծա,

Վորպեսզի վող իմանան, թե ընծաներով մեծագիւն  
Առատաձեռն յերկրի տերը գիտե պատվել իր  
Քաջին :—

Ասաց ժպտուն ամիրապետն ու ծափ տվեց յերկու  
հեղ,  
Մտան յերկու մանկավիկներ, բերին, յերկու սկուտեր.

Մեկում կարմիր ոշարակով լեցուն չինի սուրահին  
Ու մյուսում՝ վոսկեցրած յերեք ֆինչան քանգագին :

Վայր դնելով գորգի վրա, Միք-Մահմուդի  
հանդիման  
Հես կանգնեցին խոնարհաբար լսելու նո՞ր իրաման :

Բայց նա նրանց նշան արակ դուրսն սպասել իր  
կանչին.  
— Ինչն եւ այսոր ուզում անձամբ մըտովակել են  
Քաջին ..

Իւ սուրահին նրա ձեռքում գեղգեղելով մի յեղերդ  
Թափեց արյունն իր կտուցից ֆինչաններում այն  
յերեք :

— Ասա՛, վորսկան, յերբեմց արդյո՞ք ու սուր  
Թափել եւ մի յեղնիկ այսպես արյուն կարմիր և  
անբիծ :

Իսկ անոքն այս, վոր հեղում եւ անուշ հեղուկն այս  
ահա՛,  
Ըստոմբուլի մեծ սուլթանից ստացել եմ յես ընծա :

Վրան գրված կա յերկու տող մեր սրբազն  
դուրանից,  
Առ ու կարդա, կարդացվոր ես դու լալ, ինչպես,  
հայտ եւ ինձ ...

Միք-Մահմուդը ու բեկն իրար նայեցին խոր ու  
անձան,  
Ու յերկու սկ դաժան իժեր՝ իրար իսկույն  
հասկացան ...

Ստորաքարշ դավն անամոք նրանց հոգում դառնակեղ  
Գալարվում եր անապատի ֆինախնդիր ոճի պես :

Ու մինչ մոայլ Մոկաց-Միքին են սուրահին ձեռքն  
առած  
Գիրմ եր կարդում ամիրապետ Միք-Մահմուդի ցույց  
տված :

Կոլուո-կոչի ձեռքը ահա յերկարեց սկ վորպես ոճ  
Յեկ աղեխարշ քույնը քափեց ֆինչանի մեջ  
վոսկեցոծ :  
— Անո՞ւշ անենք, իգիր Միքա, ու քող ընդմիշտ  
անսպառ,  
Շաբրաթի պես քաղցըր լինի մեր յերկուսի սերը  
վաս :—

Ասաց խարդախ Միք-Մահմուղը — արյունախում  
բորենին,  
Զարկելով իր Փինջանը լիւ Մոկաց-Միքզի  
Փինջանին :

Ու խմեցին... ոշարակի յուրաքանչյուր շիքը կեզ  
Մի կայծ դարձավ քաջի պրում, այրեց իսկույն  
աղեկեզ :

— Այդ ի՞նչ հուր ե արագորեն անում այդպես...  
մի՞քի, թո՞ւյն...  
Շուրջը մի պահ մշո՞ւշ, մշո՞ւշ ու կապարե  
լություն...

Բայց խզում ե լուրթյունն այդ՝ ամիրապետը մքին  
Ցերկու վառվող ածուխի պես աշֆերն հառած  
իգիքին.

— «Այս գլուխը, վոր չի' ծոռւմ քո զորավոր քրի  
տակ,  
Կտրի'ր իսկույն և արյունը խմիր իբրև ոշարակ»—

Մեծ մարգարե Մուհամեդի պատգամը դո՞ւ  
կարդացիր,  
Խոսիր, իգիք, համագայն ես խոսքերի հետ այդ  
ընտիր :

Լուռ եր սակայն Մոկաց-Միքզեն — ընկած անել  
քակարդում  
Մի սինլքոր դահին նրա մահավեխոն եր կարդում...

— Բայց դու լո՞ւռ ես, — դիմեց դարձյալ ամիրապետը  
նրան,  
Թե՞ո իմաստուն մարգարեյի այդ պատգամին չես  
հավան :  
— Ամիրապե՞տ, առյուծը սեգ անտառումն ե  
մունչում,  
Վորի ձայնից գաղանենքրը սարսափահար են  
փախչում :

Մոկաց-Միքզեն քաջ ե իրսի, և իգի'ր ե խսկապես,  
Առյո՞ւծ ե նա և վոչ խարդախ ու խորամանկ մի  
աղվես :

Մի' պարծենա, թե վորսացիր Մոկաց իգիք  
վորսկանին,  
Թեպէտ առյո՞ւծ վորսացիր դու, բայց վորսկան չե՞ս  
տակավին .

Նա' յե վորսկան, ով չի լարում քակարդ յերբեք  
վատաքար,  
Ու սրբնքաց վազքի ատեն կանի վորսին նետահար...

Պատասխանեց Մոկաց-Միքզեն, մինչդեռ այրող մի  
կրակ  
Տարածվում եր նրա մարմնում, հոսում յերա՞կ առ  
յերակ :

Թոշնո՞ւմ եյին հետզիետե զույգ վարդերը այտերի,  
Թափվում նրա գրչանկար հոմքերի գեղն անքերի :

Տեսնում ե նա մուժով պատած աչքերի դեմ—հանց  
յերազ,  
Հովհանները ծաղկածիծաղ ու լեռները յերկնահան։

Յեղնիկների վազքը խմբով, արծիվների ազատ չունি,  
Աղբյուրները զով ու զուլալ, ջրերը ջիճ,  
կարկաչնուն։

Տեսնում ե նա իր սիրելի ժողովրդին կարոտով,  
Վոր չարաչար հաց ե դատում իր նակատի  
Քրտիթիւն։

Յեկ մի խրնիք, վորի շեմքին նոտած մի կին  
Վշտահար,  
Գիշեր-ցերեկ արտասվակոծ լաց ե լինում իր  
համար...։

Մքնեց հանկարծ... թվաց նրան կայծակ նայքեց  
այդ պահին,  
Պոտոյու յեկալ սարայը վող ու Միր-Մահմուդի իր  
գահին։

Պար քոմեցին իրերն ամեն, խառնրվեցին իրարու,  
Կանցնեց նրա դեմ—հանդիման մահը—դեղին մի  
ուրու։

Նա վայր ընկալ գետնատարած, աչքը հառած իր  
մահին,  
Միր-Մահմուդի ձեռքիցն ընկալ ու փշրվեց  
սուրահին։

Ու քրքջաց կոլոտ-ինչեն— վայրենաբույս մի  
մացա,  
Եերք տապալվեց Մոկաց-Միրզեն— կայծակնահար  
կաղնի ծառ։

Լսեց կտրինը մերձիմահ այդ քրքիջը վայրենի,  
Վոր այրող եր քույնը քան թե գծվար՝ մահից  
ավելի։  
— Սողուն, դո՞ւ յես չարախնդաց հաղթողի պես  
Քրքջում,  
Առյուծը քաջ առյուծ ե դեռ, թեկուզ վերջին իր  
շնչում։

Մոնչաց նա, ու դաշույնը վերջին ուժով շպրտված՝  
Ուղիկ թեկի սրտին նշան՝ մինչև դաստակը գնաց։  
— Ամիրապետ, վոնիրներդ չե՞ն ներվելու նաև  
թեզ,  
Ու քո փառքն ել կանցնի մի որ անհետ մոայլ տմպի  
պես։

Արդարությունը պազատում կալանավոր հավիտյան,  
Ու չի ծաղկում վոչ մի ծաղիկ անապատում  
բռնության...։

... Ու դակահար շրբունքները չբացվեցին  
վերըստին,  
Հանգա՛վ իսպառ չար աշխարհի արյունոտ սուրբ  
սրտին։



Ամենիցապես բռակ արագ բորբ— մի սև ճիավոր,  
Ամենուրեք արձագանից տիսուր լուրը բկավոր.

Մոկաց-Միրզի աստղը համգավ Միր-Մահմուդի  
պալատում,  
Սուգ և իջել Մոկաց յերկրին, սուգն և անչափ,  
անպատում.

— Դավ ե լարել քաջի հանդեպ կոլոտ-խոչեն  
գավաթան,  
Տվել նրան սև բանսարկուն քույնով խառնած մի  
Փինջան...

Digitized by srujanika@gmail.com

1

Յելան Մոկաց կտրինները, յեկան հասան ձգիրեն;  
Յեկան մտան են մարդակեր գազանի ֆյոշկ ու  
սարեն:

Խնդիր արին ամիրապետ գոռող են Միք-  
Սահմուդին,  
Իրենց հանձնել իր սպանած գյողալ Մոկաց-Միքզի  
Դիլի:

— Տանե՞ն, — ասաց, սկան իրենց քաջին՝ բոլոր  
բովանդակ, վոր ել չանեն ամիրապետ Միր-Մահմուդի դեմ  
կատակ...

Ու անքառամ ծաղիկներով, պսակներով  
գարդարում՝  
Դուրս հանեցին ամարաթից խորշակահար մի  
գարում :

Ամեն աչքից արտասույթի տևան աղբյուր եր  
հոսում,  
Ամեն բերան սարսափելի դավի մասին եր խոսում:

Քայլում եյին դիակակիր, սրտերի մեջ խոր կսկիծ,  
Բյոգ-Բադավենն ել իրենց հետ, մեռած տիրոց  
հետևից:

Մալայավի դաշտի վրա քափորն մի պահ կանգ  
առավ,  
Հավայվեցին սևեր հազած լալկան կիները պառավ:

Հազար սրտեր փշրվեցին՝ քարին զարկած կժի պես,  
Հազար-հազար վրա ընկան քեր կոտրած դշի պես:

Գետնից առան բուռ-բուռ փոշի, ծամերն իրենց  
հողեցին,  
Ծաղկունքը վող արցունիք ուաք կաքիներով  
ցողեցին...

2

—Մեր աննման Մոկաց-Միրզեն  
Կոլուն-Խոչի բույնով զնաց...  
Մոկաց-Միրզի Բյոգ-Բադավին  
Զիու քամբը դատարկ մնաց:

Մոկաց-Միրզեն փառ ու պայծառ,  
Մեր պատ-կտրին Մոկաց-Միրզեն,  
Կանաչարև չինարի ծառ,  
Հազա՞ր ափսոս Մոկաց-Միրզեն:

Մոկաց-Միրզեն — սարի վորսկան,  
Վորսկանը վորս՝ ո՞վ եր տեսել,  
Մոկաց պայծառ աստղը հանգավ,  
Հազա՞ր ափսոս Մոկաց-Միրզեն:

Ալ-Խաքունին կանչեցեք զա,  
Հազնի հինը, հանի քազեն,  
Խեղնին ծիծաղ ու բախտ չկա,—  
Հազա՞ր ափսոս Մոկաց-Միրզեն:

Մոկաց յերկրի հավերը քող  
Զեն-ձենի տան ու տաղ ասեն,  
Զկա բլբուլը հազարան,—  
Հազա՞ր ափսոս Մոկաց-Միրզեն...

Մրմուռ լացին Մոկաց յերկրի աշխատավոր  
գյուղացիք,  
Լացին, ասին «հազա՞ր ափսոս Մոկաց-Միրզեն  
գեղեցիկ»...

Յեվ առնելով իրենց ուսին անշունչ դիակն իգիրի,  
Քաղաք տարան և իշեցրին դոան առաջ անրախտի:

Խելակորույս հասան յերկու քույրերը հեգ  
վողբացին.  
Գիշերվա պես ծամերն իրենց իշան յեղբոր դիակին:

Զարվին իրենց ալուլ-մալուլ սրտի բուռը լարերին,  
Յեղերգեցին արտասվակոծ, աղեկըտուր սուր  
արին:—

Մեծ սարի նամբի փոշին,  
Քույրիկ ջան, են ո՞վ կուգա,  
Մեռնեմ իր չինար բաժին,  
Ախպերս ե, ավով կուգա.  
Այս չե՛, չե՛, մալուկել ե,  
Սիրտը խո՛ր ցավով կուգա:

Մեր բարձրիկ սարերն յելեֆ,  
Մոկացի վա՛րդ աղջլկունիք,  
Կաբվի պես մանրիկ քելեֆ,  
Քաղեցեֆ գույն-գույն ծաղկունիք,  
Վերֆերին մահլամ շինեֆ,  
Բաց անի նախշուն աչքունիք:

Հանեցեֆ Ալ-Խաքունին,  
Յելնի սուգ անի վրան,  
Զարքնեցրեֆ են սիրունին,  
Արտասուլ ցանի վրան,  
Աչքերի յերկու լնից  
Գույգ աղբյուր հանի վրան...

— Հեռու կացեֆ, ախպեր ու քուր,  
Ես ի՞նչ սուգ ու շիվան ե,  
Աչքերը փակ, սիրտը մրմուն՝  
Ես ի՞նչ շահել-զիվան ե.  
Փո՛ւլ զա եսպես աշխարհը քող,  
Բեկի դատ ու դիվա՞ն ե:

Ծիծաղ ծով-ծով աչքերըդ փակ,  
Մոկաց-Միրզու, բա՛ց արա,  
Շրբունիքներըդ ծարակ, պապակ՝  
Անո՛ւշ յար ջան, բա՛ց արա,  
Սիրտըդ երված, սիրո փափագ՝  
Իմ սիրու դեմ բա՛ց արա:

Ի՞նչ եֆ կանգնել շուրջ-բոլորուն,  
Մոկաց իգիր, քա՛ջ տղեֆ,  
Զեր պատվական ախպոր սիրուն՝  
Զիանիք հեծեֆ ու քոեֆ,  
Ու բրինդար Մոկաց-Միրզին  
Անմահական զո՛ւր բերեֆ,

Մի՛ քողնեֆ, վոր քառամի,  
Ալ ու ալվա՞ն ե,  
Վե՛ր հանեֆ մահու ֆնից,  
Զահել-զիվա՞ն ե...

— Դու մենակ կուգաս,  
Ա՛յ Բյոզ-Քաղավեն,  
Զկա՛ մեր Մոկաց  
Հույսն ու ապավեն:

Սրտիկդ մալուլ,  
Աչքըդ պղտոր ե,  
Կուլաս դու գուլ-գուլ,  
Քո վիշտը խո՛ր ե:

Մեծ սարի նամբի փոշին,  
Քույրիկ ջան, են ո՞վ կուգա,  
Մեռնեմ իր չինար բաժին,  
Ախպերս ե, ավով կուգա.  
Այս չե՛, չե՛, մալուկել ե,  
Սիրտը խո՛ր ցավով կուգա:

Մեր բարձրիկ սարերն յելեֆ,  
Մոկացի վա՛րդ աղջրկունիք,  
Կաբվի պես մանրիկ ֆելեֆ,  
Քաղեցեֆ զույն-զույն ծաղկունիք,  
Վերքերին մահլամ շինեֆ,  
Բաց անի նախշուն աչքունիք:

Հանեցեֆ Ալ-Խաքունին,  
Յելնի սուգ անի վրան,  
Զարքնեցրեֆ են սիրունին,  
Արտասուֆ ցանի վրան,  
Աչքերի յերկու լնից  
Զույգ աղբյուր հանի վրան...

## 4

— Հեռո՞ւ կացեֆ, ախպեր ու քուր,  
Ես ի՞նչ սուգ ու շիվան ե,  
Աչքերը փակ, սիրտը մրմուն՝  
Ես ի՞նչ զահել-չիվան ե.  
Փո՞ւլ զա եսպիս աշխարհը թող,  
Բեկի դատ ու դիվա՞ն ե:

Ծիծաղ ծով-ծով աչքերը փակ,  
Մոկաց-Միրզա, բա՛ց արա,  
Շրբունները ծարավ, պապակ՝  
Անո՞ւշ յար ջան, բա՛ց արա,  
Սիրտը երված, սիրո փափագ՝  
Իմ սիրու դեմ բա՛ց արա:

Ի՞նչ եք կանգնել շուրջ-բռլորուն,  
Մոկաց իգիր, քա՛ջ տղեֆ,  
Չեր պատվական ախպոր սիրուն՝  
Չինիք հեծեֆ ու քոեֆ,  
Ու բրինդար Մոկաց-Միրզին  
Անմահական զո՞ւր բերեֆ,

Մի՛ քողնեֆ, վոր քառամի,  
Ալ ու ալվա՞ն ե,  
Վե՛ր հանեֆ մահու ֆնից,  
Զահել-չիվա՞ն ե...

## 5

— Դու մենակ կուգաս,  
Այ Բյող-Բադավեն,  
Չկա՛ մեր Մոկաց  
Հույսն ու ապավեն:

Սրտիկդ մալուլ,  
Աչքը պղտոր ե,  
Կուլաս դու գուլ-գուլ,  
Բռ վիշտը խո՛ր ե:

Զերել կտրինի  
Ել չի' սաճափ քեզ,  
Սարեր չի' բռչի  
Յոլուն աստղի պես:

Յերկիրը ավեր,  
Մեր գիրը սև ե,  
Բեկը մարդակեր,  
Ամիրան դև ե:

Մեր աշխարհը մեզ՝  
Սուզն անպակաս ե,  
Քանի մելիք-քեկ՝  
Մեր որը այս ե...

6

— Ճղլրեյից յեկալ մի սև ձիավոր,  
Թղթիկ բերեց Միր-Մահմուդից բռնավոր,  
Առին տարան Մոկաց-Միրզին փառավոր,  
Արուն կաքեց մեր սրտերից վիրավոր.

Բլրուլը քռա'վ գնաց,  
Վարդընց մալուլ մնաց:

Մոկաց յերկիր բռլոր՝ քար ու քարափ ե,  
Յերկինքը կա, այս, ի՞նչ ամեմ, վոր ամպ ե,  
Յերկինքի պես մեր սիրտը ամպ ու զամպ ե,  
Կարլըտախան վարար անձրև կը քափե,  
Խոտոր ե խեղնի ճամքեն,  
Կոտո՞ր ե սրտի շուշեն...

7

Յերել գիշեր ու յերել որ դառնակսկիծ սգացին,  
Սուզն եր մտել քաղաքը վողջ, սև եր հագել  
մոկացին:

Առնու սարը մշուշի մեջ, Յեղերովը միգապատ'  
Սև ամպերով ծածկել եյին իրենց նակատը հպարտ:

Ու յերել որ, յերել գիշեր քոն եր իշնում  
յերկնից,  
Ու յերել որ, յերել գիշեր լաց եր, շիվան ու կսկիծ:

Յերել որը յերք բոլորեց, բազմությունը վողբագին  
Յելալ բարձը բլրի գագար, վոր մոտ լինի  
աստղերին.

Այնուղիւն կապույտ վրանի տակ բացին մի խոր  
գերեզման  
Ու վշտակոծ՝ հողը դրին Մոկաց-Միրզին աննման:

Գնիու առուն եր խոխոչում, ծաղկում կակաչ ու  
սուսուն,  
Հովն եր այնուղիւն բնիուշ-անուշ ծաղիկների հետ  
խոսում:

**ՅՈԹԵՐՈՐԴ ԳԼՈՒԽ**

**1**

Ամեն զիշեր հյուղերում, հաղբող քնին լուս գերի;  
Ցերք նրագներն են հանգչում նման փակվող աշխերի,

Գիշերվա պես սևազգեստ, այրող կրակը սրտում՝  
Այդ բլուրն ե բարձրանում մի կարեվեր կին  
Մրտում.

Նստում մալուլ-մենավոր շիրմաքարին վողբագին  
Ու բաց անում աստղերին վշտամորմոնք իր հոգին:

Վողբում ե իր սերը— վարդ՝ անժամանակ  
Բառամած.  
Վորի նախշուն հավքը շուտ բռա՛վ խռով ու  
գնա՞ց...

**2**

— Վե՛ր կաց, ի՛մ անգին,  
Հերիք ե քնես,

Ալ-խաքումդ կրկին  
Ցեկել ե ֆեզ տես:

Բլուր ու բարձումք  
Անցել քարքարոտ,  
Աչքը լի արցումք,  
Սրտիկը կարոտ:

Լուսընկա ու զով  
Ամառվա գիշեր  
Հազար մուրագով  
Խնճո՞ր ե նախշել:

Խնճորներն այդ իր՝  
Բերել ֆեզ նվեր,  
Քնիցըդ զարքիր,  
Ցար ջան, վեր կաց, վե՛ր:

Աչքըդ բաց արա  
Թուլս բերքերունենով,  
Խոռվ մի՛ կենա,  
Նստենք իրար բով:

Զուր եմ բերել սառ  
Ազրյուրից վճիռ,  
Ա՛ռ, Մոկաց-Միրզա,  
Աննմա՞ն իգիր:

Խմի՞ր, կո՛ւշտ խմիր,  
Սիրտըդ հովանա,

Սիրտըդ իմ սիրուն  
Ծարավ չը մնա՞...



Արև ունեյի,  
Արևս ո՞ւր ե,  
Սև սարի մքին  
Ամպը լի ջո՞ւր ե:

Ալ-վարդ, մի՛ բացվի,  
Բացվելըդ զուր ե,  
Սիրահար խոսնակ  
Բլրուլըդ ո՞ւր ե:

Շրբունքըդ ծարավ,  
Սրտիկըդ հուր ե,  
Ա՛ն, անուշ արա,  
Աղբյուրի ջուր ե:

Ա՛յս, սրտիդ զարկած  
Թշնամու սուր ե,  
Դու խոր ես քնած,  
Խնդիրս զո՞ւր ե...



Յեղերովա սարը մշո՞ւշ,  
Յերկնեֆի ծովը վրան,  
Մոկաց-Միրզեն քնիլ մուշ-մո՞ւշ  
Սիրածի հովը վրան:

Գարնանային գեղածիծաղ առավոտ եր հմայուն,  
Ամեն կողմից հալքերի տաղ, գառների կանչ ու  
մայուն:

Ապրիլը ժիր ու չար ուլիկ, բոժոժների զնոցով  
Թռչկոտում եր դաշտ ու հովիտ— ծաղիկների  
ծփուն ծով:

Թերև ու գով, անուշարույր հովն եր թկում  
Քմահան,  
Իջնում եր դաշտ, յելնում թլուր, քոչում ծաղկուն  
սարալած:

Ապրշումե զառ ու զարբար նախշուն շորերը հազած  
Կանգնել եյին հազարամյա չքնաղ լեռները Մոկաց:

Դեպ այդ լեռներն եյին քշում հովիվները մոկացի  
Բլուլների զուլալ տաղով՝ հոտերն իբենց քավարձի:

Ծիծաղում եր կապույտ ծովից սիրուն արփին  
հոգերով,  
Լի՛ յեր կրկին բնուրյունը մի դյուքական հեֆիաքով:

Ալ-հաքունի հովիվ հայրը, սրտի վրա մի վառ  
կայծ,  
Քաշում եր իր հոտը հանդարտ դեսլ այն բլուրը  
ծաղկած,

Աւր ժնում եր վաղամեռիկ Մոկաց-Միրզեն մեն-  
մենակ,  
Թողուծ այրի Ալ-Խաքունի աչքը լալով շարունակ:

Արածելով դալան խոտը, վաղորդյան ցողը վրան,  
Վետվետում եր բլրալանցին արծող հոտը նրա,

Յերբ նշանաբեց հովիվը ծեր՝ շիրմի վրա այն միակ  
Ընկած ահա յերեսնիվայր ջահել կնոշ մի դիակ:

4

— Վո՞յ, կուրաման աչքերը քող,  
Անգուր աղջիկ, Ալ-Խաքո՞ւն,  
Իմ ոջախի կրակն ու շող,  
Խավար կյանիքս փայլատո՞ւն:

Ինչո՞ւ այդպիս սև արեցիր,  
Արկը քո, սևավո՞ր,  
Ինչո՞ւ մոխիր դու ցանեցիր  
Քո հոր գլխին ալեվոր:

Իմ մեկ հատիկ նար ու ճրագ,  
Իմ աչքերի միակ լույս,  
Ինչո՞ւ, ինչո՞ւ քողիր մենակ  
Խեղն ու աննար ծերունուս:

Ի՞մ խրճիքի ուրախությո՞ւն,  
Իմ բլուլի զուլալ տաղ,  
Վո՞րտեղ գտնեմ քեզ, Ալ-Խաքո՞ւն,  
Քո անունին յես մատաղ...

Գրկած անշունչ մարմինը սառ  
Իր մեկ հատիկ աղջրկա՝  
Մրմնջում եր ծերը քշվառ.  
— Ալ-Խաքունը ել չկա’...

5

Անրախտ հայրը Մոկաց-Միրզի գերեզմանին  
առընթեր  
Մի փոս փորեց. քաղեց այնուեղ աղջրկան հետ  
սիրտը ծեր.

Ու ման յեկած իր սարերից քաղեց լալա ու սուսուն  
Ու ծողկունիքով զարդարեց զույգ շիրիմները  
սիրասուն:

Քացեց զի բարակ նամբա շիրիմների այդ կողքով,  
Վորոնիք յերկու վերքի նման բացվում եյին իրար  
քով.

Ու զրափին նմկեց լացող ուռենիներ սգավոր,  
Վոր հով անեն քնած յերկու սիրուններին սևավոր:

Այնուհետև համախ տխուր ծեր հովիվը կարեվեր՝  
Հանում եր իր հոտը դանդաղ այդ ծաղկավետ դարն  
ի վեր,

Ցեվ մինչ հանգիստ հոտը նրա բլրի վրա տարածուն,  
Ախորժակով ցողաշաղախ քարմ արուն եր  
արածում,

Եր հովիվը իր ձեռնասուն ուսիմէրի տակ նստած  
Յեղեգում եր իր սրբնավ՝ սրբակոտոր, աչքը  
Բաց...

6

Մոկաց յերկիր, սիրուն յերկիր,  
Թագավորի բուրը վրան,  
Հազար ափսոս ծաղկանց յերկիր,  
Տեր են անգուք բեկ, ամիրան:

Կյանքը զանգին-գորավորին,  
Խեղթի պահած զառը նրան,  
Յերկրի բարին բոնավորին,  
Կենաց կանաչ ծառը նրան:

Կալում շեղած ցորեն, գարին,—  
Հարկահանի կապը վրան,  
Մեզ համար չե առատ տարին,  
Զվալն ու ուարկ, չափը նրան:

Ժողովուրդը անեղան լար,  
Զալում-զոռքա չափը վրան,  
Կաքնաղբյուրը բեկի համար,  
Պղտորը մեզ, ակը նրան:

Հովիվը խեղն լավն ի՞նչ անի,  
Նրա սիրուն գառը զիլին,  
Վոսկե ձուկը արնե ծովի՝  
Ագահ-անկուշտ ձկնկուլին:

Ինչ կա՞ն կուզե ծաղիկ ծաղիկ,  
Սիրուն բացված վարդը նրան,  
Ամիրայի ու մելիքի,  
Բեկի անգուք բարը վրան:

✓ Վարդը նրան, զարդը նրան,  
Դալար-արոտ արտը նրան,  
Արցունեցը մեզ, մրմուռը մեզ,  
Եսպես աշխարհ մնար վերան...

Յերգում եր հեգ հայրը մոլոր,  
Զայնն եր ծերի կերկերում,  
Մոկաց յերկրի վիշտը բոլոր  
Նրա տխուր յերգերում:

## ԲԱՑԱՏՐՈՒԹՅՈՒՆՆԵՐ

ՄՈԿԱԾ-ՄԻՐԶԱ—ՄԻՐզա՝ հարդանքի տիտղոս ե, նշանակում  
ե գրադետ: Հերոսի բուն անունը ժող. բանահյուսության ժեմ  
անհայտ ե:

ՔՈՂՈՉ-ԲՐՋԻց պատրաստված կոնաձև դլխարկ:  
ԱՌՆՈՍ, ԿՈՌՈՇԱՊԱՀ, ԱՎԱԽՈՐԻԿ, ՈԼՄՈՒՄԵՆ, ՅԵՂԵՐՈՎ,  
ԲԱՐՎԱՐ—լեռներ ու լեռնաշղթաներ են, վորոնք յեղեռում  
են Մոկսի յոթ գեղեցիկ հովիտները: Դրանցից Առնուը ամենագե-  
ղեցիկ ու ծաղկավետ լեռն ե, վորի մասին հայ ու քուրք ժո-  
ղովուրդն ունին բանահյուսական գեղեցիկ տաղեր:

ԿՈՂՈՉ-ԽՈՉԱ— Մոկս քաղաքի հաբուտ ու բռնակալ բեկը:  
Կողուտ նշանակում ե կարճահասակ, Խոջա-հարուստ:

ՄԻՐ-ՄԱՀՄՈՒԴ—ամիրազետ, վորն ապրած ե կարծվում  
XVII-XVIII դարերում: Միր-նշանակում ե՝ քաջ, հերոս:  
ՓՈՇԻ-ՆՈՎՐ զործվածք, վոր ծառայում ե քուրզի շուրջն  
իրը փաթթող-ապարոչ:

ՇԱԼ-ՇԱՊԻԿ—տեղական գործվածք, բրդյա շապիկ:  
ՃԱՐ—ՄԵՂ կապելու շալ, մետաքսից կամ բրդից գործված:  
ԶՈՒՌ-ՔՅԱՋԱԼԻԻԿ—այծենակածի հյուսվածքով կարճ բաճ-  
կոն, առանց թեերի:

ՃԱԼՎԱՐ—տեղական գործվածք, լայն անդրավարտիկ, նախ-  
շուն յերիշներով:

ՃՈՒՌՇԻԿ—կանեփից շինված ամուր, դիմացկուն վրտնաման:  
ԹՂԹԻԿ ՀՄ—մի նամակ, գրություն:

ՊԱՏՐՈՒՏԱՇ-Գամփշտակալ:

ԲԱՆԴԻ-ՄԱՀՈՒ—գետի անուն:

ՃՈՒԵՍ—տանուտեր, գյուղապետ:

ՍՈՒԽՈՒՆ—ծաղիկ ե, նաև՝ գեղեցիկ:

ԲՈՅԵ ԹՈՍՈՒՆ—գեղահասակ, պարթե:

## ՎԵՐՁԵՐԴ

Ամպից մաղ-մաղ քոն ե կաթում  
կալիս են հով ու յերկինք,  
Մոկաց-Միրզեն և Ալ-Խաքուն  
Քուն են մոնել իրար զիրկ:

Նրանց վրա ֆնած մուշ-մուշ,  
Սաղարթ-ախիտ հովանի՝  
Որորվում են ֆնեուշ-անուշ  
Յերկու լացող ուսենի:

Ուսիներին այդ առընթեր,  
Զար աշխարհին զոհ տրված  
Ընկած ե լուս, վաղուց անտեր  
Մի հին սրինգ կոտըրված:

ՀԱՅ—ՄՊԱ:

ՔՅՈԶ—ՔԱԴԱՎԵՆ—ՄՈՒԱՄ—ՄԻՐԱԳԻ ձիու անունը:

ՊԱՏ—ԿԾՐԻՃ—Վասպուրականի հայերի վոճ և—քաջ, կտրիճ,  
շահել:

ԱՎ—ՎՈՐԱ:

ԶՀԵԶ—ԱԺԻՄ:

ՍՈՒՐԱՃԻ—ԱՐՎԱԼ:

ՋԱՆՑԱՄ—մետաքսյա դործվածք:

ԾԱՓԱՆՑ—դյուղի անուն և:

ՖԻՆՁԱՆ—Ըմպանակ:

ՃՈՂ—ՃՈՂ—Ճյուղ—Ճյուղ, ժամերի գիսակներ:

ԶԼԶՈՒԽՆ—զուլալ, վճիմ:

ԽՈԲՈՏ—սիրուն, գեղցիկի:

ԱՐՈՍ—ծովային սպիտակ թռչուն:

ԶԱՎԱՀԻՐ—զանձ, ակնեղին:

ՄԵԶԱՐ, ԴԱՍՏԱԽՈՒՆ—կապոց, բոխչա, վոր դործ ելին առ  
ծում բանջար քաղելիս:

ՍՈՒՐՈՒՆ—ՍՄԲՈՒԼԻ—ծաղիկներ են:

ՊՈՂ, ԱԻՎԱՑԿՈՒՆ—բանջարեղենի անուններ են:

ՀԵՎԱՐ—յերեկո, մայրամուս:

ԶԱՆԳԻՆ—հարուստ:

ԵՐԵՐՈՒՆ—յերերուն, մոլոր, չլար, տիսուր:

ՆԵՑԻՄՎԵՆ—վորսորդ:

ԿԱՅԹ—խնձորի տնուն և (աշնանահաս). Վասպուրականամ  
սովորություն կար, դեռ կիսահաս ինձորի վրա փակցնում եյին  
զանազան նախշուն տերե ունեցող բույսեր, ինձորը հասուն-  
նալուց հետ բաց տեղերը կարմրում եյին, իսկ փակ տեղերը  
մինւմ սպիտակ: Այդպիսի խնձորները տրվաւմ կամ ուղարկվում  
ելին բարեկամներին կամ սիրելիներին իրեն ընծա:

ԿԱՐՈՍ—բանջարաբույս և:

ԱՆԵՂ—զզրաբի գզող դործիքը:

ՃՈՒՐԿԱ—ԳՅԱԼԻԻ—ՄՈՒԱ լեռնահովիտներից ե, ուր ձմեռ-  
ները սաստիկ բուք ե լինում:

ՍԵՑԻՍ—Ճիպան:

ԽՈԼԱՄ—ծառա, թիկնապահ:

ՃԶԻԲԵ—ամիբայանիստ քաղաք, վորը գանլում և ՍԼԵՐԴԻ  
Հորավակողմը:

ՖԵՐՄԱՆ—զբավոր հրաման, հրովարտակ:

ՍԱԼԱՄ—լողույն:

ՄԱԼԱՔՅԱՎԱՐ—լնդարձակ դաշտի անուն և: Մոկսում հնա-  
վանք սովորություն կար՝ այդ դաշտում հավաքվում եր հայ  
և քուրդ աշխատավորությունը և հանդեմներ—պարեր, ձիտչավ  
սարքում:

ՊԱՐԲՈՒՃԻ—պարագլուխ, սպան իր հետեւց քաշող:

ԳՅՈՒ—լիճ:

ԿԱՐԳԱ—պասկիր, ամուսնացըու:

ԹՅՈՒԴԱՐ—վաճառական:

ԴԵՐԻԿՈՒ—պարերդի անուն և:

ԲԱՋ—հասակ:

ԱԼՈՒԼ—ՄԱԼՈՒԼ—տիսուր-տրտում:

ՓԱՐԴԱ—լարագույր (լուսամուտների):

ՓԱՆՁԱՐԱ—լուսամուտ:

ՔՅՈՇԿ ՈՒ ՍՄԱՐ—պալատ, ապարանք, դզյակ:

ՄԱՀԱՄԱՄ—սպեղանի:

ՔՐԻՆԴԱՐ—լիրավոր:

ԿԱՊ—հարկահանի կապը—կալում չեղած հացահատիկը նշա-  
նում ելին հարկահանները—տաճով, նրանից Տ-ընը վերցնելու հա-  
մար, վորպես հարկ:

ԶՈՒԲԱԿ—մէծ, հուժկու:

ԶԱՔ—դզրաբի այն գործիքը, վորով զարկում են անեղին

Լարին՝ բուրդ կամ բամբակ գզելու համար:

Պատ. խմբագիր՝ Ա. Կիրակոսյան  
Տէխ. խմբագիր և գեղարվեստական ձեռակորող՝ Ար. Ալբունյան  
Սըբագրիչ՝ Մ. Մարտիկյան  
Կոնսորցիումը պահպանութեան թիմ. Տ. Մինասյան



Գյուղականի լիազոր՝ Վ-2027. Հրատ. 4874.

Պատկեր 336. Տիբաժ 3000

**Թուղթ 72×105. Տպագր. 3 մամ.**

ՄԵԼ մամ. 51,200 նշան. Հեղինակ. 3,30 մամ.

Հանձնված և արտադրության 5 IV 1939թ.

Ստորագրված է տպագրության համար 25 V 1939 թ.

ՀՀ Ազգային գրադարան



NL0348259

34662